*IX Դ. ՎԵՐՋԻ ԵՎ X Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Արման Եղիազարյան

IX դ. վերջի և X դ. սկզբի հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրությունը, դատելով գիտական գրականության մեջ առկա տեսակետներից և սկզբնաղբյուրների տեղեկությունների նորովի մեկնաբանության հնարավորություններից, կարիք ունի հավելյալ քննության և ճշգրտման: Այդ առումով հենքային են X դ. 40-60-ական թթ. աթոռակալած Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի տեղեկությունները, որոնք, համադրելով սկզբնաղբյուրներում պահպանված այլ տեղեկությունների հետ, հնարավորություն են տալիս լիովին հստակեցնելու խնդրո առարկա ժամանակաշրջանի հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրությունը:

Անանիա Ա Մոկացին իր թղթերից մեկում, խոսելով այսպես կոչված Աղվանից ապստամբության մասին, գրում է, որ VIII դ. սկզբին, երբ Եղիա Ա Արճիշեցի կաթողիկոսը (703-717 թթ.) կարողացավ բնում խեղդել քաղկեդոնական խմորումները հայոց արևելից կողմերում, այնուհետև աթոռակալած 14 հայրապետների օրոք, մինչև Գևորգ Բ Գառնեցու աթոռակալությունը, այնտեղ իրադրությունը հանդարտվեց: Բայց երբ արաբները 894 թ. Դողսի ճակատամարտի նախօրեին ձերբակալեցին Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին[1], հայոց արևելից կողմերում նոր խլրտումներ սկսվեցին: Ընդունված էր, որ Աղվանից կաթողիկոսին ձեռնադրում էր հայոց հայրապետը, բայց քանի որ վերջինս ձերբակալված էր, հայոց արևելից կողմերի (Աղվանից) եպիսկոպոսները ժողով գումա-

* Հոդվածը ներկայացվել է 25.02.2020 թ., գրախոսվել է 22.03.2020թ., ընդունվել է տպագրության 25.04.2020 թ.:

[1] Տե՛ս «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), «Մատենագիրք հայոց», հ. ԺԱ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 461-462:

րեցին և Հունանին «կարգեցին... ինքեանց կաթողիկոս»[1]: Եվ քանի որ Գևորգ Բ Գառնեցուն գերությունից ազատելու հարցում մեծ էր Աղվանից Համամ թագավորի **[**հայոց Սմբատ Ա թագավորի (891-914 թթ.) կողմից թագադրվել է 894 թ.[2]**]** դերը[3], հայոց հայրապետը նրա խնդրանքով համաձայնեց ձեռնադրել Հունանին: Այդպիսով, խախտվեց այն կարգը, որով հայոց արևելից կողմերի աշխարհիկ և հոգևոր մեծամեծերը ընտրում էին Աղվանից կաթողիկոսի թեկնածուին, որին հավանություն էր տալիս ու ձեռնադրում հայոց կաթողիկոսը: Անանիա Ա Մոկացին պատմում է, որ «...յետ վաղճանելոյ հայրապետին Հայոց տեառն Գէորգայ՝ սովորութիւն կալաւ եւ դիւրադարձ զեղեալսն. իբրեւ վաղճանէր Յունանն՝ ձեռնադրէին նոյն սովորութեամբ զհարազատ նորին զոմն Սիմէոն, եւ ի նմանէ՝ Դաւիթ, եւ ի նմանէ՝ Սահակ, եւ ի նմանէ՝ Գագիկն, առ որ այժմ բանս է. **տեւեալ ապստամբութեամբ զամս. ԿԹ. եւ զժամանակս հայրապետաց հնգից, մինչեւ ի մեր նուաստութիւնս**[4]»: Այսինքն, Անանիա Ա Մոկացին ապստամբություն է համարում Աղվանից կաթողիկոսի ձեռնադրությունը հայոց հայրապետից անկախ:

Փաստորեն, ըստ Անանիա Ա Մոկացու՝ Գևորգ Բ Գառնեցուց մինչև Անանիա Ա Մոկացու կաթողիկոսությունը ընկած 69-ամյա պատմափուլում աթոռակալել են հայոց հինգ հայրապետներ: Սակայն արտաքուստ խիստ հասկանալի տեղեկությունը կարիք ունի բովանդակային և ժամանակագրական հստակեցման ու ճշգրտման, որից հետո հնարավոր կլինի անդրադառնալ այդ 69-ամյա շրջանում աթոռակալած կաթողիկոսների ժամանակագրության և նույնականացման խնդրին: Առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել Գևորգ Բ Գառնեցու և Անանիա Ա Մոկացու աթոռակալության ժամանակագրությունը, որը հնարավորություն կտա բացահայտել նշված 69-ամյա պատմափուլի ժամանակագրական և բո-

---

[1] «Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեանն տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն» (այսուհետև՝ Անանիա Մոկացի), «Մատենագիրք հայոց», Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 266-267:

[2] Տե՛ս **Եղիազարյան Ա.,** Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 135. 1, 2011, էջ 19:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 463:

[4] **Անանիա Մոկացի**, էջ 267:

վանդակային սահմանները: Սակայն, քանի որ հաշվարկի մեկնակետը Անանիա Ա Մոկացու հայրապետությունն է, քննությունը հարկ է սկսել հենց նրանից:

Ըստ Ասողիկի՝ Անանիա Ա Մոկացին վախճանվել է հայոց 414 թ. (մարտ, 965 թ. - մարտ, 966 թ.)՝[1] 22 տարի աթոռակալելուց հետո[2]: Ասողիկը նրան ժամանակակից հեղինակ է, որը 940-ականների վերջին, երբ բյուզանդական բանակը գրավեց Կարինը (949 թ.), պատանի էր[3], հետևաբար 960-ականների կեսերին՝ արդեն հասուն տղամարդ: Սամվել Անեցին ևս նշում է, որ Անանիա Ա Մոկացու աթոռակալության տևողությունը 22 տարի է, որից 5-ը նա գտնվել է Վասպուրականում, իսկ 17-ը՝ Այրարատում[4]: Ըստ նրա՝ Անանիա Ա Մոկացին աթոռակալել է մինչև հայոց 414 թ. (մարտ, 965 թ. - մարտ, 966 թ.)[5]: Անանիա Ա Մոկացու 22-ամյա աթոռակալության մասին հիշատակում են նաև Ստեփանոս Օրբելյանը և Կիրակոս Գանձակեցին[6]: Եթե հայոց 414 թվականը համարենք նրա աթոռակալության 22-րդ տարին, ապա առաջինը կլինի 392 թվականը (ապրիլ, 943թ. - ապրիլ, 944 թ.)՝ ըստ տարեշրջանների, կամ 393 թվականը (ապրիլ, 944 թ. - ապրիլ, 945 թ.)՝ ըստ տարիների հաջորդականության հաշվելու դեպքում: Այստեղ, սակայն, հենքայինն այն է, որ անձամբ Անանիա Ա Մոկացի կաթողիկոսն իր աթոռակալության սկիզբ հա-

---

1 Տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), «Մատենագիրք հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Եր., 2011, էջ 756:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 749:

3 Ասողիկը, խոսելով Աբասի գահակալության շրջանում գործունեություն ծավալած սրբակրոն հայրերի մասին, գրում է. «Զոմանս ի սոցանէ ի ծերութեան իւրեանց՝ ի տղայութեան մերում տեսաք աչաւք մերովք՝ ճաշակելով ի քաղցր ճաշակաց բանից նոցա» (նույն տեղում, էջ 754):

4 Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թ., (աշխատասիրությամբ՝ Կ. Մաթևոսյանի), Եր., «Նաիրի» հրատ., 2014, էջ 173: Հեղինակը սխալմամբ «Արգինա»-ի փոխարեն գրում է «Վարագ» (տե՛ս նույն տեղում, էջ 380, ծան. 182):

5 Տե՛ս նույն տեղում, էջ 173-175:

6 Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց» (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան), Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան, 1910, էջ 502, **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 85:

մարում էր հայոց 390 թ. (5 ապրիլ, 941 թ. - 5 ապրիլ, 942 թ.)[1], իսկ հետո հավելում, որ Աբաս թագավորը (929-953 թթ.) վախճանվել է «յամն երեքտասաներորդ մերոյ (իմա՛ Անանիա կաթողիկոսի - Ա. Ե.) նուաստ աթոռակալութեանս»[2]: Ասողիկից հայտնի է նաև Աբաս թագավորի վախճանի տարեթիվը՝ հայոց 402 թվականը (2 ապրիլ, 953 թ. - 2 ապրիլ, 954 թ.)[3], ավելի որոշակի՝ 953 թ.: Ուստի նշենք, որ Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի աթոռակալության վերոհիշյալ թվագրումների դեպքում (943 թ. կամ 946 թ.) դրա 13-րդ տարին ոչ մի կերպ չի համապատասխանում Աբասի մահվան 953 թ.: Իրականում 953 թվականն Անանիա Ա Մոկացու աթոռակալության 13-րդ տարին է՝ այն 941 թվականից հաշվելու պարագայում: Սակայն այդ դեպքում առաջանում է երկրորդ խնդիրը: Հայոց 390 թվականից (ապրիլ, 941 թ. - ապրիլ, 942 թ.) հաշվարկելով Անանիա Ա Մոկացուն հատկացվող 22 տարիները՝ հայոց 414 թվականին (մարտ, 965 թ. - մարտ, 966 թ.), երբ, ըստ Ասողիկի և Սամվել Անեցու, նա վախճանվել է, ոչ մի կերպ հասնել չենք կարող:

Անանիա Ա Մոկացին հիշատակում է, որ ինքը Գագիկ Արծրունի թագավորի (908-943 թթ.) որդի Գրիգոր Դերենիկ թագավորի (943-959 թթ.) հրամանով զբաղվել է Աղվանից խոտորյալ հայրապետին դարձի բերելու գործով[4]: Ավելի ուշ Անանիա Ա Մոկացին հայերի հոգևոր-դավանական միասնության ապահովման աշխատանքներն իրականացնում էր Շիրակից՝ արդեն Աբաս թագավորի հովանավորությամբ[5], ինչը հուշում է, է, որ կաթողիկոսը Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու (908-943 թթ.) որդի Գրիգոր Դերենիկի գահակալության սկզբում դեռևս գտնվել է Վասպուրականում, որտեղ գտնվում էր հայոց հայրապետական աթոռը Հովհաննես Ե Դրասխանակերտցու՝ 924 թ. այնտեղ տեղափոխվելուց սկսած, իսկ այնուհետև տեղափոխվել է Շիրակ: Ըստ Սամվել Անեցու՝ Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը «Ե (5) ամ. յԱղթամար եւ ԺԷ (17) ամ ի Վարագ եկաց[6]»: Փորձ է կատարվել Սամվել Անեցու հիշատակած

---

1 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 268: Տե՛ս նաև **Ստեփանոս Օրբելյան**, էջ 275:

2 **Անանիա Մոկացի**, էջ 268:

3 Տե՛ս **Ասողիկ**, էջ 755:

4 Տե՛ս **Անանիա Մոկացի**, էջ 258:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 259:

6 **Սամվել Անեցի**, էջ 173:

«Վարագ»-ի ներքո հասկանալ Շիրակ գավառի Արգինա գյուղաքաղաքը[1], ինչը քիչ հավանական է: Ասողիկը գրում է, որ «Տէր Անանիա Ա Մոկացի՝ առաջնորդ սուրբ ուխտին Վարագայ, հայրապետ Հայաստանեայցս՝ ամս ԻԲ (22)[2]», ինչը նշանակում է, որ Ասողիկը Անանիա Ա Մոկացու աթոռակալության վասպուրականյան շրջանը պարզապես համարում է Վարագա սուրբ ուխտի առաջնորդության շրջան, իսկ Այրարատ տեղափոխվելուց հետո՝ ամենայն հայոց հայրապետության շրջան: Թերևս, այդ տողերի սխալ մակաբերումն է պատճառը, որ Սամվել Անեցին, ում հայտնի էր, որ Անանիա Ա Մոկացին Վասպուրականում 5 տարի աթոռակալելուց հետո տեղափոխվել է Այրարատ, նշում է, թե իբր նա փոխադրել է իր աթոռը Վարագ և այնտեղ մնացել 17 տարի:

Քանի որ Անանիա Ա Մոկացին իր հայրապետության սկիզբը դնում է հայոց 390 թվականին (5 ապրիլ, 941 թ. - 5 ապրիլ, 942 թ.), ապա կաթողիկոսարանի տեղափոխումը դրանից հինգ տարի անց ընկնում է 945 կամ 946 թ.: 941-966 թվականների ընթացքը, սակայն, ոչ թե 22, այլ 26 տարի է ըստ տարիների հաջորդականության և 25 տարի՝ տարեշրջանների հաշվելու դեպքում: Հետևաբար, անհրաժեշտ է բացատրել նրան 22-ամյա աթոռակալություն վերագրելու աղբյուրային տեղեկությունները:

Չնայած ներկայացված աղբյուրային հարուստ նյութին՝ պատմագիտության մեջ, ըստ էության, առանց խորքային քննության ամրագրվել է, թե Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի հայրապետության շրջանն ընդգրկել է 946-968 թթ.[3]: Ն. Ադոնցը Անանիա Ա Մոկացու աթոռակալությունը թվագրել էր 943-968 թվականներով[4], թեև մեկ այլ պարագայում նշել է 943-965 թվականները[5]: Դժվար չէ տեսնելը, որ ըստ Ն. Ադոնցի առաջին

---

1 Տե՛ս **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 380, ծանոթ. 182:

2 **Ասողիկ**, էջ 749:

3 Տե՛ս **Օրմանեան Մ**., Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Կոստանդնուպոլիս, հրատ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1912, § 748, սյուն 1085-1086: Մ. Օրմանյանին հետևել են այլ հեղինակներ ևս: Տե՛ս **Հարությունյան Հ**., Հայաստանը IX-XI դարերում, Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1959; **Մաթևոսյան Կ**., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 11 և այլն:

4 Տե՛ս **Ադոնց Ն**., Երկեր, հ. Ե, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 238:

5 Տե՛ս **Ադոնց Ն.,** Երկեր, հ. Բ, Եր., ԵՊՀ հրատ, 2006, էջ 322:

ջին կարծիքի՝ նշված թվերի միջակայքը կազմում է 25 տարի՝ Ասողիկի կողմից Անանիա Ա Մոկացուն «հատկացվող» տարիներից ավելի, իսկ ըստ երկրորդի՝ 22 տարի, թեև Անանիա Ա Մոկացու աթոռակալման թվագրումն ընդհանուր առմամբ կասկածելի է: Վերջերս էլ Ա. Հակոբյանն Անանիա Ա Մոկացու աթոռակալության շրջանը թվագրեց 941-967 թվականներով[1]:

Նախկինում ենթադրել էի, որ կա՛մ Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի մահվան թվականի հիշատակության մեջ կա վրիպակ, և նա իրականում մահացել է ոչ թե հայոց 414 թ., այլ 413 թ. (մարտ, 964 թ. - մարտ, 965 թ.)՝ աթոռակալելով 941-964 թթ., և կա՛մ, քանի որ Անանիա Ա Մոկացին իր աթոռակալության առաջին հինգ տարիներն անցկացրել է Վասպուրականում, հաշվարկելով հայոց 390 թվականից (ապրիլ, 941 թ. ապրիլ, 942 թ.), նրա տեղափոխվելը Այրարատ պետք է թվագրել 946 թվականով, իսկ աթոռակալության 22 տարիները՝ 946-968 թվականներով[2]: Սակայն այժմ հակված եմ որոշակի շտկումներ կատարելու այդ տեսակետի մեջ: Առավել հավանական է թվում, որ Անանիա Ա Մոկացու աթոռակալությունը ենթարկվել է երկակի հաշվարկի, որից էլ առաջացել է վերոհիշյալ թվականային անհամապատասխանությունը: Անձամբ Անանիա Ա Մոկացին, փաստորեն, իր աթոռակալությունը հաշվարկել է 941 թվականից՝ Վասպուրականում հայրապետական գահը բարձրանալուց սկսած, որը նրա աթոռակալության առաջին տարին է, քանի որ 953 թվականը 13-րդ տարին է: Քանի որ սա հենց Անանիա Մոկացու հաշվարկն է, ապա այդ հայեցակետից նրա աթոռակալության հինգերորդ տարին, երբ նա տեղափոխվել է Այրարատ, 945 թվականն է: Քանի որ Ասողիկի հիշատակած՝ Անանիա Ա Մոկացու մահվան հայոց 414 թվականին (մարտ, 965 թ. - մարտ, 966 թ.) կասկածելու հիմքեր չունենք այն պարզ պատճառով, որ պատմիչը կաթողիկոսի ժամանակակիցն էր և ընդհանրապես հաղորդում է վստահելի տեղեկություններ, ստացվում է, որ Վասպուրականում ձեռնադրվելուց հետո մինչև 966 թ. նա աթոռա-

---

[1] Տե՛ս **Յակոբեան Ա.**, Մատթէոս Ուռհայեցու վկայութիւնը 961 թուականին Անին մայրաքաղաք հռչակելու մասին (նոր աղբյուրագիտական քննություն), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIX, Եր., 2014, էջ 310:

[2] Տե՛ս **Եղիազարյան Ա.,** Աբաս Բագրատունի, թագավոր հայոց, Ե., ԵՊՀ հրատ., 2017, էջ 92:

կալել է 26 տարի: Ինչ վերաբերում է Ասողիկի և Սամվել Անեցու հիշատակած՝ Անանիա Ա Մոկացու աթոռակալության 22 տարիներին, ապա ակնհայտ է, որ հաշվարկը կատարվել է Այրարատում հաստատվելու 945 թ. սկսած (առաջին տարի), որով 966 թվականը դարձել է 22-րդ տարի: Այստեղ նաև հարկ է շեշտել, որ 945 թվականը մի կողմից նրա՝ Վասպուրականում աթոռակալելու 5-րդ տարին է, իսկ մյուս կողմից՝ Այրարատում աթոռակալելու առաջին տարին: Այսպիսով, Անանիա Ա Մոկացին վախճանվել է 966 թ. տարեսկզբին, քանի որ նրա մահվան՝ հայոց 414 թվականը սկսվել էր 965 թ. մարտին և ավարտվել 966 թ. մարտին:

Ինչ վերաբերում է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին, ապա նրա աթոռակալությունը ավանդաբար թվագրվել է 876-897 թթ. [1], որը, ինչպես կտեսնենք, հիմնավորվում է նաև Անանիա Ա Մոկացու ներկայացրած ժամանակագրության հիմքով կատարված հաշվարկի շնորհիվ: Հովհաննես Ե Դրասխանակերտցու հեղինակած՝ հայոց կաթողիկոսների գահացանկում Գևորգ Բ Գառնեցուն վերագրվում է 21-ամյա աթոռակալություն[2], որը և համապատասխանում է նշված թվագրմանը:

---

[1] Մ. Օրմանյանը Գևորգ Գառնեցու աթոռակալության սկիզբ է համարում 877 թ. հունվաի 13-ը (տե՛ս **Օրմանեան Մ**., նշվ. աշխ., § 674, սյուն 983), սակայն առավել հավանական է Ղ. Ալիշանի տեսակետը, ըստ որի՝ նա սկսել է աթոռակալել 876 թ. հունվարից (տե՛ս **Ալիշան Ղ.,** Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Ի Ս. Ղազար Վենետկոյ, Ս. Ղազար, 1869, էջ 475): Գևորգ Բ Գառնեցու հայրապետության շրջանը 876-897 թթ. է թվագրել նաև Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանը (տե՛ս Մատթէոս եպս. Իզմիրլեան, Հայրապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ եւ Սիս ու Աղթամար, Բ հրատ., Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2008, էջ 65):

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 608: Տե՛ս նաև «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծաղկաքաղ արարեալ», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպարան, 1893, էջ 272, 276: Ասողիկը նրան վերագրում է 22-ամյա քահանայապետություն: Տե՛ս **Ասողիկ**, էջ 710: Ի դեպ, Թովմա Արծրունին պատմում է. «...ՅԽԷ (իմա՛ 347 թ. =ապրիլ, 898 թ. - ապրիլ, 899 թ.). թուականութեանս Հայոց ...տէր Գէորգ Հայոց կաթողիկոս փոխեցաւ» (**Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 248): Ի դեպ, նա գրում է նաև, որ Մաշտոց Ա Եղիվարդեցին «...կեցեալ ամիսս Ը. կամ Թ. յաթոռ հայրապետականին» (նույն տեղում, էջ 249): Քանի որ վերջին տեղեկությունը ցույց է տալիս, որ պատմիչն այնքան էլ ստույգ տեղյակ չէ կա-

Այժմ հարկ է հստակեցնել Անանիա Ա Մոկացու՝ «տեւեալ ապստամբութեամբ զամս. ԿԹ. եւ զժամանակս հայրապետաց հնգից, մինչեւ ի մեր նուաստութիւնս» տեղեկության «մինչեւ ի մեր նուաստութիւնս» հատվածի մեկնարկի թվականը: Եթե կաթողիկոսի աթոռակալության մեկնարկի 941 թվականից հանենք ապստամբության 69 տարիները, կհասնենք 872 թ., երբ Գևորգ Բ Գառնեցին, ում օրոք սկսվել էր «Աղվանից ապստամբությունը», դեռ չէր բազմել հայրապետական գահին: Սակայն ճիշտ և ճիշտ կհասնենք Գևորգ Բ Գառնեցու աթոռակալության սկզբի 876 թ-ին[1], եթե նշված 69 տարիները հանենք Անանիա Ա Մոկացու՝ Այրարատում հաստատվելու 945 թ-ից: Անկասկած, իրադարձությունների և հատկապես հայրապետական աթոռի՝ Վասպուրականից Այրարատ տեղափոխվելու տրամաբանությամբ Անանիա Ա Մոկացու աթոռակալությունը հաշվում էին հենց այդ թվականից, որի պատճառով Ասողիկը, որ իրադարձությունների ժամանակակիցն էր, գրում էր, թե Անանիա Ա Մոկացին աթոռակալել է միայն 22 տարի: Անանիա Ա Մոկացին ևս 69 տարիների հաշվարկը կատարել է իր՝ Այրարատում հաստատվելու 945 թվականից:

Այսպիսով, բացահայտվում է Անանիա Ա Մոկացու տեղեկության ևս մեկ մանրամասն. թեև նա ապստամբության 69-ամյա փուլում ոչ անվանապես հիշատակում է միայն հայոց հինգ կաթողիկոսի, իրականում հաշվարկը սկսում է Գևորգ Բ Գառնեցու ժամանակներից, ավելին, այդ փուլում ընդգրկում է նաև անձամբ իր աթոռակալության վասպուրականյան շրջանը՝ հինգ տարի (941-945 թթ.): Տեղին հավելենք, որ թեև Անանիա Ա Մոկացու հիշատակած 69 տարիների մեջ ընդգրկված էին Գևորգ Բ Գառնեցու աթոռակալության տարիները, իրականում հիշատակված կաթողիկոսների մեջ նա հաշվառված չէ, այլապես հինգի փոխարեն պետք է նշվեր վեց կաթողիկոսների մասին:

Արդ, հստակեցնելով, որ Անանիա Ա Մոկացու հիշատակած 69 տարիներն ընդգրկել են 876-945 թվականները, անդրադառնանք Գևորգ Բ Գառնեցու և Անանիա Ա Մոկացու միջև աթոռակալած կաթողիկոսների ժամանակագրության խնդիրներին: Նրանց, փաստորեն, պետք է «հատ-

---

թողիկոսի աթոռակալության տևողության մասին, ապա ակնհայտ է, որ Գևորգ Բ Գառնեցու մահվան թվականն էլ թյուրիմացության հետևանք է:

[1] Տե՛ս **Ալիշան Ղ.,** նշվ. աշխ., էջ 475:

կացվի» 897-945 թթ. ժամանակաշրջանը՝ 49 տարի (ըստ տարիների հաջորդականության հաշվարկի՝ 897 թ.՝ առաջին տարի, 898 թ.՝ երկրորդ տարի… 945 թ.՝ 49-րդ տարի): Վերջինից էլ պետք է հանել Անանիա Ա Մոկացու աթոռակալության վասպուրականյան շրջափուլի հինգ տարիները՝ 941-945 թթ., որով Գևորգ Բ Գառնեցի և Անանիա Ա Մոկացի կաթողիկոսների միջանկյալ կաթողիկոսներին հատկացվող տարիների քանակը կկրճատվի մինչև 45 տարի:

Ասողիկը Գևորգ Բ Գառնեցուց հետո հիշատակում է Մաշտոց Ա Եղիվարդեցի (իշխել է մեկ տարի), Հովհաննես Ե Դրասխանակերտցի (իշխել է 22 տարի), Թեոդորոս Ա Ռշտունի (իշխել է 11 տարի), Եղիսե (իշխել է յոթ տարի) կաթողիկոսներին[1]: Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ 28 տարի իշխած Հովհաննես Ե Դրասխանակերտցուց[2] հետո հայոց հայրապետական աթոռը զբաղեցրել են Ստեփանոսը՝ մեկ տարի, Թեոդորոսը՝ 11 տարի, Եղիսեն՝ յոթ տարի[3]: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ մինչև Անանիա Ա Մոկացին իշխած հինգ կաթողիկոսներն էին Մաշտոց Ա Եղիվարդեցին, Հովհաննես Ե Դրասխանակերտցին, Ստեփանոսը, Թեոդորոսը և Եղիսեն[4]: Փաստորեն Ասողիկի և Կիրակոս Գանձակեցու հիշատակություններում միմյանցից տարբերվում են միայն Հովհաննես Ե Դրասխանակերտցու աթոռակալության տարիները, ինչպես նաև Ստեփանոս Բ կաթողիկոսի մեկամյա աթոռակալության հիշատակության բացակայությունը Ասողիկի տեքստում: Ինչպես կտեսնենք, երկու պարագայում էլ ճիշտ են Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները: Իսկ Հովհաննես Ե Դրասխանակերտցուն Ասողիկի կողմից վերագրված աթոռակալության ԻԲ (22) տարիները[5] իրականում ԻԸ (28) թվատառերի շփոթի հետևանք է[6], ինչը Բ (2) և Ը (8) թվատառերի պարագայում առավել քան հնարավոր է:

Մաշտոց Ա Եղիվարդեցու հայրապետության շրջանի վերաբերյալ Ասողիկի նշած մեկ տարին կլորացված տվյալ է և ճշգրիտ է հաջորդած

---

[1] Տե՛ս **Ասողիկ**, էջ 741-749:

[2] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 81-82:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 85:

[4] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 276:

[5] Տե՛ս **Ասողիկ**, էջ 742:

[6] Տե՛ս **Օրմանեան Մ**., նշվ. աշխ., § 733, սյուն 1064:

հայրապետ Հովհաննես Ե Դրասխանակերտցու տեղեկությունը, ըստ որի՝ Մաշտոց Ա Եղիվարդեցին «ամիսս եաւթն միայն կալեալ զաթոռ հայրապետութեանն»[1]: Հովհաննես Ե Դրասխանակերտցու հեղինակած հայոց հայրապետների գահացանկում Մաշտոց Ա Եղիվարդեցուն դարձյալ վերագրվում է 7 ամիս աթոռակալություն[2]: Հայտնի է, որ պահպանվել է Մաշտոց Ա Եղիվարդեցու տապանաքարը, որի վրա արձանագրված է նրա մահվան՝ հայոց 346 թվականը[3]: Սակայն այդ թվականը համապատասխանում է 897 թ. ապրիլից մինչև 898 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածին: Քանի որ Գևորգ կաթողիկոսը, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ մահացել էր հայոց 346 թ. ձմռանը, իսկ Մաշտոցը՝ կաթողիկոս դարձել դրան հաջորդող գարնանը[4], վերջինիս աթոռակալության յոթ ամիսները պետք է ավարտված լինեին նույն թվականի վերջին, որից հետո կաթողիկոսական գահին բազմեց Հովհաննես Ե Դրասխանակերտցին: Ինչպես տեսանք, ըստ Ասողիկի՝ Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսը գահ է բարձրացել նույն՝ հայոց 346 թ.[5]: Փաստորեն, Հովհաննես Ե Դրասխանակերտցին, իրոք, կարող էր գահ բարձրանալ 898թ. ՝ մինչև ապրիլի 16-ը, երբ սկսվեց հայոց 347 թվականը:

Այս առումով հետաքրքրական է, որ Մ. Օրմանյանը շեշտադրում է, որ հայոց 346 թվականի (ապրիլ, 897 թ. - ապրիլ, 898 թ.) ընթացքում հայրապետական աթոռին հաջորդաբար երեք կաթողիկոսներ են գտնվել՝ Գևորգ Բ Գառնեցին, Մաշտոց Ա Եղիվարդեցին և Հովհաննես Ե Դրասխանակերտցին[6]: Ինչպես տեսանք, ըստ Ասողիկի՝ այդ թվականին է վախճանվել Գևորգ Բ Գառնեցին և կաթողիկոսական գահին բազմել

---

1 **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 470:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 608: Տե՛ս նաև «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», էջ 272:

3 Տե՛ս **Գարեգին Ա. կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951, էջ 98, ծանոթ. 5: Տե՛ս **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ., § 695, սյուն 1012:

4 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 469-470:

5 Տե՛ս **Ասողիկ**, էջ 742, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 609:

6 Տե՛ս **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ., § 695, սյուն 1012: Մ. Օրմանյանի կարծիքը հիմնավորվում է Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններով: Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 608-609:

Հովհաննես Ե Դրասխանակերտցին: Ստացվում է, որ 897 թ. ապրիլից մինչև 898 թ. ապրիլը ընկած ժամանակամիջոցում, իրոք, տեղի են ունեցել Գևորգ Բ Գառնեցու մահը, Մաշտոց Ա Եղիվարդեցու աթոռակալությունը և Հովհաննես Ե Դրասխանակերտցու՝ հայոց հայրապետական գահին բարձրանալը: Այդ առումով վերջինիս վստահելի տեղեկության համաձայն՝ Մաշտոց Ա Եղիվարդեցու աթոռակալության յոթ ամիսները պետք է տեղադրվեն 897 թվականի ընթացքում՝ ապրիլից հետո, երբ սկսվեց հայոց 346 թվականը: Մ. Օրմանյանը համարում է, որ Մաշտոց Ա Եղիվարդեցու աթոռակալության յոթ ամիսները սկիզբ են առել 897 թ. ամռան սկզբին, երբ, ի դեպ, վախճանվել է Գևորգ Բ Գառնեցին, իսկ Հովհաննես Ե Դրասխանակերտցին հայրապետական գահին է բազմել 898 թ. սկզբին[1]:

Սակայն ըստ Հովհաննես Ե Դրասխանակերտցու՝ Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը վախճանվել է ոչ թե ամռան սկզբին, այլ ձմռանը, իսկ Մաշտոց կաթողիկոսը գահ է բարձրացել գարնանը և աթոռակալել 7 ամիս[2]: Սակայն, եթե իրոք մահը տեղի ունեցած լիներ ձմռանը, ապա դա կստիպեր փոխել դեպքերի ժամանակագրությունը, քանի որ հայոց 346 թ. ձմեռը ընդգրկում է 897 թ. դեկտեմբեր և 898 թ. հունվար-փետրվար ամիսները: Այս դեպքում Մաշտոց Ա Եղիվարդեցու աթոռակալությունը, առավել ևս՝ մահը, չէին կարող տեղի ունենալ հայոց 346 թ., որն ավարտվում էր 898 թ. ապրիլի 15-ին: Քանի որ տեղեկությունը հաղորդում է Մաշտոց Ա Եղիվարդեցու հաջորդ կաթողիկոսը, կարելի է ենթադրել, որ խոսքը ոչ թե բուն ձմռան, այլ ձմեռային, ցուրտ եղանակի անցնելու մասին է: Հիրավի, հեղինակը գրում է. «Իսկ իբրեւ ձմերնային սգաւորութիւն ի գարնանային բարեխառնութեան աւդոց յեղանակէր զփոփոխումն»[3]: Այսպիսով արձանագրենք, որ Գևորգ Բ Գառնեցին վախճանվել է 897 թ. գարնան սկզբին, թերևս, ապրիլին, երբ դեռ լեռնաշխարհում գերիշխում էր ձմեռային եղանակը, իսկ հավանաբար մայիսին հայրապետական աթոռին է բազմել Մաշտոց Ա Եղիվարդեցին, աթոռակալել 7 ամիս և երկրային կյանքին հրաժեշտ տվել նույն թվականի վերջին, թերևս, դեկտեմբերին: Հայոց 346 թվականի վերջին, այսինքն՝ 898 թ. հունվարից

---

[1] Տե՛ս **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ., § 695, սյուն 1012:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 469-470:

[3] Նույն տեղում, էջ 469:

ապրիլ ընկած ժամանակահատվածում, կաթողիկոս է դարձել Հովհաննես Ե Դրասխանակերտցին, ով Մաշտոց Ա Եղիվարդեցու աշակերտն ու ազգականն էր[1]: Այդ ամենը տեղի է ունեցել հայոց 346 թվականին:

Ինչ վերաբերում է Հովհաննես Ե Դրասխանակերտցուն և հաջորդներին, ապա այս առումով կարևոր է հայոց կաթողիկոսների աթոռակալության տարիների մասին Ասողիկի ժամանակագրությունը, որը նպաստում է մի շարք ժամանակագրական խնդիրների լուսաբանմանը: Ըստ նրա՝ հայոց 346 թվականից (ապրիլ, 897 թ. - ապրիլ, 898 թ.) սկսած 22 տարի աթոռակալել է Հովհաննես Ե Դրասխանակերտցին[2], այնուհետև աթոռակալել է Թեոդորոսը՝ 11 տարի և Եղիսեն՝ յոթ տարի[3]: Ստացվում է, որ Հովհաննես Ե Դրասխանակերտցին աթոռակալել է մինչև հայոց 367 թ. (ապրիլ, 918 թ. - ապրիլ, 919 թ.) կամ 368 թ. (ապրիլ, 919 թ. - ապրիլ, 920 թ.): Արդյունքն իրականությանը չի համապատասխանում: Կիրակոս Գանձակեցին և Սամվել Անեցին նշում են, որ Հովհաննես Ե Դրասխանակերտցին աթոռակալել է 28 տարի[4]: Այս դեպքում ստացվում է, որ կաթողիկոսը վախճանվել է, տարեշրջաններով հաշվարկելու դեպքում, հայոց 373 թ. (ապրիլ, 924 թ. - ապրիլ, 925 թ.) կամ, ըստ տարիների հաշվարկման՝ հայոց 374 թ. (ապրիլ, 925 թ. - ապրիլ, 926 թ.): Այս արդյունքն առավել մոտ է իրականությանը, քանի որ Հովհաննես Ե Դրասխանակերտցին իր Պատմությունն ավարտում է 924 թ. վերջի դեպքերի նկարագրութամբ, երբ պատրաստվում էր տեղափոխվել Վասպուրական[5]: Սամվել Անեցին նոր կաթողիկոս Ստեփանոս Բ-ի մեկամյա հայրապետությունը հաշվում է հայոց 374 թվականից (ապրիլ, 925 թ. - ապրիլ, 926 թ.)՝ այն հասցնելով մինչև 375 թ. (ապրիլ, 926 թ. -ապրիլ, 927 թ.)[6]: Այդ կաթողիկոսին, ի դեպ, Ասողիկը չի հիշատակում՝ Հովհաննես Ե Դրասխանակերտցուց անմիջապես հետո որպես կաթողիկոս ներկայաց-

---

1 Տե՛ս նույն տեղում, էջ 470-471, 608-609:

2 Տե՛ս **Ասողիկ**, էջ 742:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 748-749:

4 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 81-82; **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 169:

5 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 579: Տե՛ս նաև **Աբեղյան Մ.,** Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար), Ե., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1944, էջ 436; **Եղիազարյան Ա.,** Աշոտ Երկաթ. թագավոր հայոց, Ե., ԵՊՀ հրատ., 2016, էջ 82-83:

6 Տե՛ս **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 172:

նելով Թեոդորոս Ա-ին, ով իշխել է 11 տարի[1]: Սամվել Անեցին ևս Թեոդորոս Ա-ին վերագրում է աթոռակալության 11 տարի՝ հայոց 375 թվականից (ապրիլ, 926 թ. -ապրիլ, 927 թ.) մինչև հայոց 386 թ. (ապրիլ, 937 թ. -ապրիլ, 938 թ.)[2]: Ասողիկն ու Սամվել Անեցին հաջորդ՝ Եղիսե կաթողիկոսին վերագրում են հայրապետության յոթ տարիներ[3]:

Դեռևս Մ. Չամչյանցը համարում էր, որ Հովհաննես Ե Դրասխանակերտցին մահացել է 925 թ.՝ աթոռակալելով 27 տարի և ութ ամիս, որից հետո մինչև 926 թ. մեկ տարի կաթողիկոսական գահը զբաղեցրել է Ստեփաննոս Բ-ն, նրանից հետո էլ՝ Թեոդորոս Ա-ն[4]: Մ. Օրմանյանը գրում է, որ Հովհաննես Ե Դրասխանակերտցին վախճանվել է 929 թ.՝ իր տեսակետի համար որպես հիմք ներկայացնելով այն, որ 928 թ. վախճանված Աշոտ Երկաթի մահը նա չի հիշատակում: Ըստ նրա՝ դա չի նշանակում, որ կաթողիկոսը այդ ժամանակ արդեն մեռել էր, այլ այն, որ իր պատմությունն էր ավարտել: Նա ընդունում է, որ միջնադարյան հեղինակները նրան վերագրում են հայրապետության 27 կամ 28 տարի, որը հաշվելով 898 թվականից՝ հասցնում է 926 թ.: Սակայն ստույգ թվերը մի կողմ դրած՝ Մ. Օրմանյանը գրում է, որ ինչ-որ «պատմական պահանջներ կը պարտաւորեն այդ թուականէն անդին ալ երկարել Յովհաննէսի կեանքը»[5], բայց ի վերջո այդպես էլ այդ պատմական պահանջները չի ներկայացնում: Ըստ Մ. Աբեղյանի՝ Հովհաննես Ե Դրասխանակերտցին վախճանվել է 925 և 930 թթ. միջև[6]: Հ. Բախչինյանը Հովհաննես Ե Դրասխանակերտցու աթոռակալության սկիզբ էր համարում 898 թվականը և գրում, թե նա «...իր Պատմությունը սկսել է գրել Վասպուրականում ...927 թվականին: Մեկ-երկու տարի հետո, 929 թ., արդեն նա փակում է իր մատյանը և շատ չանցած կնքում նաև իր մահկանացուն»[7]: Հովհաննես Ե Դրասխանակերտցու կյանքի վերջին շրջանին անդրա-

---

1 Տե՛ս **Ասողիկ**, էջ 748:

2 Տե՛ս **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 172-173:

3 Տե՛ս **Ասողիկ**, էջ 749; **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 173:

4 Տե՛ս **Չամչեանց Մ**., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, Վենետիկ, ի Ս. Ղազար, հ. Բ, 1785, էջ 816:

5 **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ, § 733, սյուն 1064:

6 Տե՛ս **Աբեղյան Մ.,** նշվ. աշխ., էջ 453:

7 **Բախչինյան Հ.,** Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, «Էջմիածին» պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1973, № 3, էջ 45:

դարձած Վ. Վարդանյանը ձեռնպահ է մնացել նրա վախճանի թվականը նշելուց՝ միայն բերելով Մ. Չամչյանցի, Մ. Օրմանյանի և Մ. Աբեղյանի կարծիքները[1]: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում՝ Գևորգ Բ Գառնեցուց մինչև Անանիա Ա Մոկացի, ներկայացված են Մ. Օրմանյանի կատարած թվագրումները[2]:

Նշվածը ցույց է տալիս, որ իրականությանն ավելի մոտ են Սամվել Անեցու տեղեկությունները, որով Հովհաննես Ե Դրասխանակերտցու մահը և Ստեփանոսի աթոռակալության սկզբնավորումը թվագրված է հայոց 374 թվականով (ապրիլ, 925 թ. - ապրիլ, 926 թ.): Այդպես հիմնավորվում է Մ. Չամչյանցի թվագրումը. Հովհաննես Ե Դրասխանակերտցին երկրային կյանքին հրաժեշտ է տվել 925 թ.[3]:

Մ. Օրմանյանը Հովհաննես Դրասխանակերտցու մահը կարծելով 929 թ.՝ այնուհետև կատարում է հետևյալ թվագրումները. Ստեփաննոս Բ՝ 929-930 թթ. [4], Թեոդորոս Ա՝ 930-941 թթ.[5] և Եղիսե (Եղիշե)՝ 941-946 թթ.[6]: Ի դեպ, վերջին երեք կաթողիկոսներին, իր իսկ խոստովանությամբ, առանց աղբյուրային որևէ հիմնավորման, Ռշտունի է կոչել Մ. Օրմանյանը, քանի որ «Աղթամար Ռշտունեաց գաւառին մէջն է, և Ստե-

---

1 Տե՛ս **Վարդանյան, Վ.,** Հովհաննես Դրասխանակերտցու կյանքի վերջին շրջանի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1988, № 3, էջ 122:

2 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, էջ 463:

3 Հակասական է Հովհաննես Ե Դրասխանակերտցու աթոռակալության շրջանի վերաբերյալ Հուսիկ վարդապետ Մովսիսյանի տեսակետը: Նա, գրելով այն մասին, որ Հովհաննես Ե Դրասխանակերտցին հայոց հայրապետական աթոռին բազմել է 898 թ. և վախճանվել 929 թ., եզրահանգում է, թե նա աթոռակալել է 27 տարի (տե՛ս «Հայաստանեայցս առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւն», աշխատասիրեց Յուսիկ վարդապետ Մովսիսեան, Բ հրատ., Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2008, էջ 173-176): Հետաքրքրական է նաև Մելքիսեդեկ վարդապետ Մուրադյանցի կարծիքն այն մասին, որ Հովհաննես Դրասխանակերտցու 27-ամյա աթոռակալությունը սկիզբ է առել 897 թ. և ավարտվել 924 թ. (տե՛ս Մելքիսեդեկ վարդապետ Մուրադյանց, Պատմություն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո, վերահրատարակություն, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2011, էջ 184-189):

4 Տե՛ս **Օրմանեան Մ**., նշվ. աշխ., § 739, սյուն 1074:

5 Տե՛ս նույն տեղում, § 740, սյուն 1073:

6 Տե՛ս նույն տեղում, § 746, սյուն 1083:

փանոսի տեղացի ըլլալը ակներեւ է, նոյնպէս իւր երկու յաջորդները»[1]: Սխալաշատ է Հուսիկ վարդապետ Մովսիսյանի տեսակետն այս երեք կաթողիկոսների աթոռակալության տարիների վերաբերյալ: Ըստ նրա՝ Հովհաննես Ե Դրասխանակերտցու մահից (929 թ.) հետո մեկ տարի աթոռակալեց Ստեփանոս Բ-ն, նրան հաջորդած Թեոդորոս Ա-ն «…տասնամեայ Կաթողիկոսութիւնից յետոյ 936 թ. վախճանուեց», իսկ վերջինիցս հետո յոթ տարի՝ մինչև 943 թ., աթոռակալեց Եղիսեն[2]: Պարզ է, որ հեղինակը սխալ հաշվարկ է կատարել: Ըստ Մելքիսեդեկ վարդապետ Մուրադյանցի՝ Հովհաննես Ե Դրասխանակերտցու մահից հետո, որը նրա կարծիքով տեղի է ունեցել 924 թ., մեկ տարի աթոռակալել է Ստեփանոս Բ-ն, 10 տարի՝ Թեոդորոս Ա-ն՝ մինչև 935 թ., իսկ Եղիսեն հայոց հայրապետական աթոռին է եղել յոթ տարի՝ 935-943 թթ.[3]:

Սակայն կատարված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճշգրտումներ կատարելու հայոց հայրապետների աթոռակալության թվագրումներում: Հովհաննես Ե Դրասխանակերտցուց հետո Ստեփանոսը, Թեոդորոսը և Եղիսեն, ելնելով վերոհիշյալ տեղեկություններից, իշխել են շուրջ 17 տարի՝ ըստ տարիների հաջորդականության և 16 տարի՝ ըստ տարեշրջանների հաշվարկման պարագայի (նշված հինգ կաթողիկոսներին բաժին ընկնող 45 տարիներից հանելով Մաշտոց կաթողիկոսի աթոռակալության 7 ամիսը և Հովհաննես Ե Դրասխանակերտցու աթոռակալության շուրջ 27 տարի և ութ ամիսը)՝ մինչև 941 թ., երբ կաթողիկոսական աթոռին բազմեց Անանիա Ա Մոկացին: Դրանցից մեկը վերագրելի է Ստեփանոս Բ-ի (925-926 թթ.), իսկ 11-ը՝ Թեոդորոս Ա-ի (926-937 թթ.) աթոռակալությանը: Մնում է հինգ տարի, որն էլ Եղիսեի աթոռակալության ժամանակաշրջանն է (937-941 թթ.): Թեև վերևում ներկայացրեցինք, որ որոշ աղբյուրներում Եղիսեին վերագրվել է յոթ տարվա աթոռակալություն, բայց Մ. Օրմանյանը կարծում էր, որ իրականում պետք է լինի հինգ (Ե), որը բացատրելի է Է և Ե թվատառերի շփոթությամբ[4]: Դա խիստ հավանական է՝ հաշվի առնելով Վարդան վարդապե-

---

[1] Նույն տեղում, § 737, սյուն 1071:

[2] Տե՛ս Հ. վարդապետ Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 176-178:

[3] Տե՛ս Մելքիսեդեկ վարդապետ Մուրադյանց, նշվ. աշխ., էջ 189-190:

[4] Տե՛ս **Օրմանեան Մ**., նշվ. աշխ., § 746, սյուն 1082:

տի տեղեկությունն այն մասին, որ Եղիսեն իշխել է հինգ տարի[1]: Նշենք նաև, որ Մ. Օրմանյանը Եղիսեի աթոռակալությունը թվագրում էր 941-946 թթ.[2], ինչը հերքվում է Անանիա Ա Մոկացու տեղեկություններով: Այսպիսով, Եղիսեն հայոց հայրապետական աթոռը զբաղեցրել է հինգ տարի՝ մինչև 941 թ.:

Ի վերջո, ներկայացված նոր ժամանակագրության հիմնավորման համար նշենք, որ միջնադարի տարբեր հեղինակներ հայոց հայրապետերի աթոռակալության տարիները հաշվել են երկու տարբերակով՝ ըստ տարիների հաջորդականության և տարեշրջաններով: Ըստ տարիների հաջորդականության հաշվարկի, որպես կանոն, տարիների քանակը մեկով ավելի է տարեշրջանների հաշվարկով ստացված արդյունքից: Մասնավորապես, Եղիսեի աթոռակալության շրջանը (937-941 թթ.) ըստ տարիների հաջորդականության հաշվարկի՝ հաշվվում է, թեև ոչ լիարժեք, բայց 5 տարի (937 թ.՝ առաջին տարի, 938 թ.՝ երկրորդ տարի, 939 թ.՝ երրորդ տարի, 940 թ.՝ չորրորդ տարի, 941 թ.՝ հինգերորդ տարի), իսկ տարեշրջաններով հաշվարկի պարագայում՝ 4 տարի (937-938 թթ.՝ մեկ լիարժեք տարի, 938-939 թթ.՝ մեկ լիարժեք տարի, 939-940 թթ.՝ մեկ լիարժեք տարի, 940-941 թթ.՝ մեկ լիարժեք տարի, ընդամենը՝ 4 լիարժեք տարի): Նման օրինակները հայ միջնադարյան մատենագրության մեջ բազմաթիվ են: Բերեմ մեկ օրինակ. Թովմա Արծրունին և Ասողիկը ընդունում են Աշոտ Ա արքայի գահակալությունը հայոց 336 (ապրիլ, 887 թ. -ապրիլ, 888 թ.)-339 (ապրիլ, 890 թ. - ապրիլ, 891 թ.) թվականների ընթացքում[3], սակայն նրանցից առաջինը Բագրատունի առաջին արքային վերագրում է չորս[4], իսկ մյուսը՝ հինգ տարվա գահակալություն[5]: Ակնհայտ է, որ Թովմա Արծրունին Աշոտ Ա-ի գահակալությունը հաշվարկում է տարեշրջաններով (887-888 թթ.՝ 1 լիարժեք տարի, 888-889 թթ.՝ 1 լիարժեք տարի, 889-890 թթ.՝ 1 լիարժեք տարի, 890-891 թթ.՝ 1 լիարժեք

---

[1] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1862, էջ 89:

[2] Տե՛ս **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ, § 746, սյուն 1082-1083: Վ. Վարդանյանը ևս կարծում է, որ Եղիսեն աթոռակալել է 941 թվականից (**Վարդանյան Վ.,** Արծրունիները հայոց պատմության մեջ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, էջ 131):

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 236-238; **Ասողիկ**, էջ 740-741:

[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 238:

[5] Տե՛ս **Ասողիկ**, էջ 741:

տարի, ընդամենը՝ 4 լիարժեք տարի), իսկ Ասողիկը՝ ըստ տարիների (887 թ.՝ առաջին տարի, 888 թ.՝ երկրորդ տարի, 889 թ.՝ երրորդ տարի, 890 թ.՝ չորրորդ տարի, 891 թ.՝ հինգերորդ տարի):

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ նշենք, որ Անանիա Մոկացու տեղեկությունն այն մասին, որ «Աղվանից ապստամբության» 69-ամյա պատմափուլում աթոռակալել են հայոց հինգ կաթողիկոսներ, ճշգրիտ չէ, քանի որ այդ տարիների մեջ հաշվարկված են նաև Գևորգ Բ Գառնեցու աթոռակալության 21 և իր իսկ հայրապետության առաջին հինգ տարիները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գևորգ Բ Գառնեցին աթոռակալել է 876-897 թթ. (21 տարի), Մաշտոց Ա Եղիվարդեցին՝ 897 թ. (յոթ ամիս), Հովհաննես Ե Դրասխանակերտցին՝ 898-925 թթ. (գրեթե 28 տարի), Ստեփանոս Բ-ն՝ 925-926 թթ. (մեկ տարի), Թեոդորոս Ա-ն՝ 926-937 թթ. (11 տարի) և Եղիսեն՝ 937-941 թթ. (հինգ տարի): Իսկ Անանիա Մոկացին հայոց հայրապետական աթոռը զբաղեցրել է 941-966 թթ., որից 941-945 թթ. գտնվել է Վասպուրականում, իսկ 945-966 թթ. (22 տարի)՝ Այրարատում:

Բանալի բառեր. *կաթողիկոս, ժամանակագրություն, Անանիա Ա Մոկացի, Աղվանից ապստամբություն, կաթողիկոսական գահ, նոր մեկնաբանություն, սկզբնաղբյուրներ:*

О ХРОНОЛОГИИ ПРАВЛЕНИЯ КАТОЛИКОСОВ ВСЕХ АРМЯН В КОНЦЕ IX И ПЕРВОЙ ПОЛОВИНЕ X ВЕКА.

Арман Егиазарян

Ключевые слова: *Католикос, хронология, Анания Мокаци, восстание в Алуанке, Патриаршеский престол, новая интерпретация, первоисточники.*

Хронология армянских католикосов конца IX-первой половины X вв. , исходя из существующих научных взглядов и возможности нового толкования сведений источников, требует дополнительного изучения и уточнений.

Католикос всех армян середины X века Ананиа Мокаци пишет, что в течении 69-и лет до того как он взошел на Патриаршеский престол, начиная с эпохи католикоса всех армян Геворга Гарнеци (876-897), правили 5 католикосов. Исследование показывает, что эти 69 лет включают 876-941 гг. , когда правили Геворг Гарнеци, Маштоц Егивардеци (897), Ованнес Драсханакертци

(898-925), Степанос (925-926), Теодорос (926-937) и Елисе (937-941), а также первые 5 лет правления католикоса Анании Мокаци, когда он восседал в Васпуракане (941-945).

ON THE CHRONOLOGY OF THE REIGN OF THE CATHOLICS OF ALL ARMENIANS AT THE END OF THE IX AND FIRST HALF OF THE X CENTURY.

Arman Yegiazaryan

Key words: *Catholicos, chronology, Anania Mokatsi, uprising in Aluank, Patriarchal throne, new interpretation, primary sources.*

The chronology of the Armenian Catholicoses of the end of the IX century and the first half of the X century, based on existing scientific views and the possibility of a new interpretation of the informations from the sources, requires additional study and corrections.

Catholicos of all Armenians of the middle of the X century Anania Mokatsi writes that for 69 years before he ascended the Patriarchal throne, starting from the era of the Catholicos of all Armenians Gevorg Garnetsi (876-897) ruled 5 Catholicoses. The study shows that these 69 years include the period of 876–941, when Catolicoses Gevorg Garnetsi, Mashtots Eghivardetsi (897), Hovhannes Draskhanakertzi (898-925), Stepanos (925-926), Theodoros (926-937), Elise (937-941) ruled, as well as the first 5 years of the reign of the Catholicos Ananias Mokatsi, when he sat in Vaspurakan (941-945).